21/11/2019 թ
Ժամը 11:00 թիվ՝ 4

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-19/42 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
/հաշվապահ/ Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Կարգի 43-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.13-րդ կետի պահանջներին համապատասխամ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ կատարվել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հարցմանը ի պատասխան սատացված եզրակացության համաձայն Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ն սուն գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 2019/11/08, դրությամբ ունի 27993 ՀՀ դրամի չափով ժամկետնանց պարտավորություն: Սակայն այդ պարտավորությունը չի գերազանցում <<Գնումներ մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

2. Հրավերի պահանջների նկատմամբ մասնակիցների ներկայացարծ ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանության և գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին.

2.1 Բացառությամբ Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ի, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես՝

2.1.2 Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ն 8-րդ չափաբաժնի համար ներկայացրած տեխնիկական բնութագրում բացակայում է գնման ընթացակարգի հրավերով պահանջվող տվյալ դեղի (գնման առարկայի) տեղափոխման և պիտանիության ժամկետի մասին պայմանները: Մասնավորապես, գնման ընթացակարգի հրավերին կից պայմանագրի տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի համաձայն, 8-րդ չափաբաժնում ներառված գնման առարկա հանդիսացող դեղի տեխնիկական բնութագրով պահանջվում է.

որպեսզի տվյալ դեղը գնորդին հանձնելու պահին ունենա հետևյալ պիտանիության ժամկետը՝ եթե դեղը ունի 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ, ապա այն հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ իսկ մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

իսկ տեղափոխման պայմանները լինեն հետյալը՝ եթե դեղը պահանջում է պահպանման և տեղափոխման հատուկ ջերմային, խոնավության ռեժիմներ կամ պայմաններ՝ ապա այդ պայմանները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» N 17-Ն հրամանի պահանջներին:

2.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով հրավերի 7.18-րդ կետով որոշեց՝ 8-րդ չափաբաժնի մասով կասեցնել գնահատող հանձնաժողովի սույն նիստը և ծանուցել՝ **Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ին** առաջարկելով՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել 8-րդ չափաբաժնի համար ներկայացրած տեխնիկական բնութագրում հրավերի նկատմամբ առկա անհամապատասխանությունը:

8-րդ չափաբաժնի գնահատման գործընթացը շարունակելու համար հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ**-ին վերը նշված ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող 4-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

3. Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին

3.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 59-րդ կետերի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- ԳԱԼՄԱՆ ՍՊԸ մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար
- Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար
- Վիգ Ֆարմ ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

4. Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

4.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ ***5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով.

Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել

1	ԳԱԼՄԱՆ ՍՊԸ	5-րդ չափաբաժնի մասով
2	Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ	2-րդ չափաբաժինների մասով
4	Վիգ Ֆարմ ՍՊԸ	3-րդ, 4-րդ, չափաբաժինների մասով

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 5 օրացույցային օր անգործության ժամկետ

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան

/դեղագործ/ Ս. Անանյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան